


Գ Ո Ւ Թ Ա Ն

ՀԱՆԴԵՍ



ՀԱՂԱԳՈՒՄԻ, ԳԻՏԱԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ
ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ

ՀՈՎԱՆԱՌՈՒԹԵԱՄ

Պ. Է. ՏԻԻՓԼՈՒ

Տնօրէն Էնսրիփի Բասթօնի եւ սնդաւ Էնսրիփի սր Ֆրանսի

ՀԻՐՆԱԿԻՐ-ՏՆՕՐԷՆ

ԳԱՐԵԳԻՆ Գ. ՄԵԾԱՏՈՒՐԵԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

ԲՕԼ ԺԷՐԷ

COUTAN

REVUE D'AGRICULTURE, SCIENCES ET ARTS

SOUS LE PATRONAGE DE

M. E. DUCLAUX

Directeur de l'Institut Pasteur, membre de

l'Institut de France

Directeur :

K. MÉDZADOURIAN, Ingénieur-Agronomie

SÉCRÉTAIRE

PAUL GÉRÉE. Ingénieur-Agronome

PARIS

Վ. ՎԵՐՄՕՐԵԼ

Վիլլֆրանշ (Րոն) Ֆրանսա

1900ի Ցուցահանդեսին Երկու մեծ մրցանակ

ԷՔԼԷՐ ԹԻԼ 1 ԿԱՐԿՈՒՏԱՐԳԵԼ

ՄԵՍ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՔԱՇՈՂ



ՊԱՐԶՈՒԹԻՒՆ, ՂԿԻՆ, ՏՈՎՈՒՆԹԻՒՆ

Մ Ղ Ե Ղ Ա Կ Ն Ե Ր

Ուղեցէք տեղեկութիւն

Կարկուտի դէմ ԿԱՐԿՈՒՏԱՐԳԵԼներ

ԷՔԼԷՐի վայրկենական Պուլլիս Միտիուի եւ
Պլաքրոզի դէմ:

Երաշխաւորութիւն ազդեցութեան, զիւրաւ գործածուելուն
եւ խնայողութեան . 12 լծվարի համար մէկ ծրարը 1 ֆր.
75 : 24 ծրարը 42 ֆր.

Իրել

V. VERMOREL

Villefranche (Rhône)

France

Գ Ի Ի Ղ Ա Կ Ա Ն Դ Ա Ս Ա Տ Ո Ի Ն Ե Ր Ո Ի

ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԴԱՍԸ

Գուժանի Գ. թուով բացատրեցի հողագործութեան դասընթացքի մը անհրաժեշտ պէտքը մեր գիւղերու եւ նախակրթական վարժարաններու մէջ, ուղղելով խօսքս անոնց՝ որոնցմէ կախում ունի այդ դասի հաստատուիլը:

Այսօր ալ կ'ուղղեմ՝ յօգուածս՝ գիւղային դաստուաներու՝ բացատրելով այդ դասի հոգին, յուսալով դիւրացուցած ըլլալ սկսուելիք աշխատութիւնը:

Երկրի մը հողագործութիւնը զարգացնելու միակ եւ կարճ ճամբան՝ անոր գիւղացի ժողովրդին հողագործական ծանօթութիւններ տալն է, այդ ալ՝ պէտք է աւանդել վարժարաններու միջոցով:

Միայն պէտք է գիտնալ թէ՛ ի՞նչ բանի մէջ պիտի կայանան հողագործական ծանօթութիւնները. ի՞նչ պիտի ըլլայ այդ դաստիարակութեան ոգին, ի՞նչպէս եւ ի՞նչ պայմանի մէջ պէտք է դասախօսուին:

Վարժարաններու եւ գիւղական դաստուաներու միջոցով կարելի է շուտով եւ ապահով կերպով ժողովրդի բոլոր խաւերուն մէջ մտցնել հողագործական գիտութիւնները, նոր գիւտերը, մշակութեանց կատարելագործութիւնները եւն:

Հողագործութեան դասը պէտք չէ կայանայ չոր ու ցամաք ծանօթութիւններ գոց ընել տալու մէջ, պէտք է դիմել տղու խելքին եւ ո՛չ թէ յիշողութեանը, որպէս զի կարող ըլլայ դիտել՝ դատել իւր շուրջը գտնուած եւ զինքը շրջապատող քարերը, բոյսերը, կենդանիները, գործիքները՝ որոնց վրայ ուշադրութիւն չի դարձնէր բնաւ անուս հողագործը:

Ուսուցիչը պարտի մտցնել վարժարանին մէջ փորձառական մէթոտը, տղուն մտքին մէջ պարտի զետեղել բոլոր այն հաստատուն գաղափարները, որոնց վրայ հիմնուած են ժամանակակից գիտութիւնները:

Պէտք է տղոց մտքին մէջ մտցնել, որ գիւղերու մէջ ալ կարելի է խելքի եւ շահու աշխատութիւններ ստեղծել, հասկցնել անոնց՝ որ սխալ է այն գաղափարը՝ թէ գրամ շահելու կամ մտքի աշխատութեամբ պարապելու համար անհրաժեշտ է մեծ կեդրոններու, մայրաքաղաքներու կամ քաղաքներու մէջ հապտատուիլ:

Ուսուցիչը՝ վարժարանին մէջ հրահանգիչ նախնական դասախօսութիւն մը եթէ խնամով աւանդէ իր աշակերտին՝ գիտողութիւնը, դրական փորձառութիւնը եւ ընթերցանութիւնը ապագային կրնան լրացնել պակաս մնացածը:

Ասկից 15-20 տարի առաջ մեր պատուելիները, վարժապետները կամ տիրացուները, որոնց յանձնուած էին վարժարանները, ո՛չ պիտի հասկնային, ո՛չ պիտի ըմբռնէին, եւ ո՛չ ալ պիտի կրնային գործադրել մեր այս առաջարկը՝ մանաւանդ եթէ ձեռքերնին ալ գիրք մը չունենային, որովհետեւ պէտք եղած գիտութեանց տարրական ծանօթութիւններն իսկ չունէին եւ չէին կրնար հասկնալ մեր այս դասի հոգին: Գաւառական ուսուցիչներէ մեր ստացած բազմաթիւ նախակները ցոյց կուտան որ, գաւառներու մէջ, այսօր ունինք պատրաստուած ուսուցչական դաս մը, որ կրնայ մեզ հասկնալ եւ գործադրել մեր տուած հրահանգները:

Անհրաժեշտ չէ տղոց ձեռքը հողագործութեան գիրք մը տալը եւ խառն ի խառն անոնց ուղեղը լեցնել անօգուտ ծանօթութիւններով: Տղուն գիրքը՝ դաշտը՝ արտը եւ պարտէզը պէտք է ըլլան, ուր իր ծնողքը իր աչքին առջեւ կ'աշխատին, իր դասը՝ շարագրութեան նիւթը պիտի ըլլայ, գրաւոր կամ բերանացի, նայելով տարիքին՝ այդ նիւթն ալ պէտք է առնուի իր առջեւ կատարուած աշխատութիւններէն, որոնց գուցէ ինքն ալ կը մասնակցի ազատ ժամերուն կամ արձակուրդի օրերուն:

Հողագործական դաս մը, առանց յոգնեցնելու տղան, անոր ուշադրութիւնը կ'արթնցնէ եւ միեւնոյն ատեն կը զուարճացնէ զինքը:

Օրուան եւ եղանակներու մէջ կատարուած փոփոխակի աշխատութիւնները տղուն առիթ կուտան միշտ նոր գիտողութիւններ ընելու եւ խորհելու: Աշակերտը նախ պէտք

է սորվի դիտել, յետոյ իր դիտողութիւնները նօթագրել, քէն ետքն ալ, իր աչքին առջեւ անցած դարձածին ինչ պէս եւ ինչո՞ւ համար ըլլալը հասկնալ:

Դասատուի դերը պիտի ըլլայ տղոց ըրած այս դիտողութիւնները շարակարգել, անոնցմէ հանել՝ ցոյց տալ օրէնքները եւ սկզբունքները փոխանակ բռնի կերպով աշխատիլ աշակերտին ուղեղին մէջ մտցնելու իր դասը, ըսել է թէ՛ գիրքը անհրաժեշտ է աւելի ուսուցչին քան աշակերտին, որուն օգտակար ըլլալէ աւելի՛ շատ անգամ փաստակար կրնայ ըլլալ: Պէտք չէ կարծել որ, փոխանակ գրական պատգուն նիւթի մը՝ բանջարի տնկելը, որթատունկի հոտելը կամ կալը կամնելը եթէ նիւթ ընտրուին, ատոնց վրայ եղած շարագրութիւններով ուղղագրութեան, քերականութեան կամ ոճի օրէնքները չեն կրնար սորվուիլ, բաւ է որ դասատուն կարող ըլլայ ցոյց տալ այդ գրուածքներուն մէջի օրէնքները, որոնք աւելի շահեկան, օգտակար եւ աւելի գործնական հաշիւներու տարրերը պիտի պարունակեն:

Այս մէթոտի կիրառութեամբ, անշուշտ տղան չի պիտի սորվի աշխարհի հինգ մասերու հողագործութիւնը, բայց ինչ որ մեզ համար աւելի կարեւոր եւ թանգ է, պիտի դիտնայ եւ պիտի սիրէ իւր գիւղինն ու գաւառինը, դասատուն անոր ցոյց տուած ըլլալով օգտակարը եւ փաստակարը, հողագործական յառաջադիմութիւնը արագօրէն պիտի գայ, որովհետեւ ապագայի մշակողներ պիտի կրնան փորձառութեամբ՝ տրամաբանելով եւ խելօք դիտողութիւններով ըստանալ ճշմարիտ եւ լաւագոյն արդիւնքներ քան հին հողագործները:

Ուրախ պիտի ըլլանք, եթէ մեր գաւառաբնակ ուսուցիչները խորին այս խնդրոյն վրայ, պէտք է սկսիլ եւ միշտ սկիզբէն՝ 1Ձ տարեկան տղոցմէ՝ զգուշանալով չափազանցութիւններէ, որ ամենէն հասարակ եւ փաստակար պատմութիւնն է, որուն մէջ կ'իյնան ընդհանրապէս խնդրոյն խորը չի թափանցողները:

ԳԱՐԵԳԻՆ ՄԵԾԱՏՈՒՐԵԱՆ

Հ. ՂԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ

Պրն. Գարեգին Մեծատուրեանը ձեռնամուխ լինելով «Գուլթան»ը հրատարակելու, զուցէ կարծել է թէ հողագործութիւնը անսեսապիս միայն պէտք է օգնէ Հայ ժողովրդին. բայց ես գալիս եմ, իբրեւ բժիշկ, բացատրելու, թէ հողագործութիւնը անողջապահապիս եւս օգտակար է նոյն ժողովրդին:

Հողագործութիւնը տնտեսութեան տեսակէտից, այո՛, ինքն ըստ ինքեան դրամագլուխ է, բայց նա ոչ պակաս դրամագլուխ է, իբրեւ կազդուրող առողջութեան, իբրեւ պատճառ երկայնակեցութեան եւ ո՛ր տնտեսագէտը կը համարձակի պնդել թէ՛ ամենամեծ դրամագլուխը առողջութիւնը չէ եւ երկայնակեցութիւնը:

Ըստ վիճակագրութեան՝ բոլոր մեզ յայտնի արհեստաւորներին, վաճառականներին, գիտնականներին եւ այլ ժողովրդական խաւերի եւ դասերի մէջ ամենաքաջառողջները եւ մանաւանդ ամենքից աւելի երկայնակեացները հողագործներն են:

Յայտնի է թէ ի՛նչ աղէտալի աւերուածներ է գործում «նեվրաստենիա» կամ նեարդասպառ լինելը ժի եւ ի դրերում մարդկութեան մարմնոյ կազմի մէջ: Երջում եմ գիտնական առածը եւ ասում՝ «in corpore sano — mens sana» — առողջ մարմնի մէջ եւ առողջ միտք ու հոգի: Երբ սպառում է մարմնոյ, նեարդերի զօրութիւնը, թուլանում է եւ կամքը եւ այնուհետեւ... մարդի աստղը խաւարման ճանապարհին է կանգնած՝ մեղամաղձութիւն, յիշողութեան թուլութիւն, խելացնորութիւն եւ վերջապէս մահ կամ ինքնասպանութիւն: Այո՛, միմիայն Եւրոպայումը իւրաքանչիւր տարի յիսուն հազար (50, 000) հոգի ինքնասպանութեան է դիմում, ահա թէ ո՛ր աստիճանի հոգին թուլացել է մարդկութեան մէջ. Հին դարերումը մեր պպիւրը բնաւ ծանօթ չէին ինքնասպանութեան արհեստին, բայց այսօր... երջանկութեան դռներից մէկն էլ այդ է համարւում. յիսո՛ւն հազար, տարեկան... երանի դոցա...

Ինքնասպանութիւնը, ի հարկ է, կախուած է բարդ հանգամանքներից, որպէս են՝ հիւանդոտ ժառանգականութիւնը, կեանքի մէջ հազար տեսակ անյաջողութիւններ, որոց մէջ է եւ իւրաքանչիւրի համար իւր կոչմանը ներգործական կերպիւ ծառայելու անհնարաւորութիւնը, բայց պակաս տեղ չեն բռնում եւ տարուայ եղանակները եւ օղաչափի այս կամ այն փոփոխութիւնը: Եւ այդ բոլոր պատճառները յանգում են ի մի, այն է՝ նեարդային յոգնածութեան, վատաողջութեան ընդհանրապէս եւ հետեւաբար կաւսի թուրքեան կամ իսպառ բացակայութեան:

Վերոյիշեալ պատճառներից այժմ մեզ զբաղեցնողը օղային երեւոյթներն են: Վիճակագրութիւնից յայտնի է որ շոգ եղանակներին մարդիկ աւելի յաճախ են զրկում իւրանց կեանքից, քան ցուրտ եղանակներին եւ այսպէս ամենաշատը ընկնում է Յուլիս ամսոյ վերայ, ամենաքիչը Դեկտեմբերի. նոյնպէս եւ օղաչափի ճնշման ժամանակ մարդիկ աւելի յաճախ են կտրում իւրեանց կեանքի թելը: Յայտնի է որ փակուած կեանքի մէջ, օրինակ բանտարկեալները բանտում անազին մեծ թւով են հիւանդանում բարակացաւով. յայտնի է նոյնպէս, որ խոր ու մութ ձորերում, որպիսիք են Զուիցերիայի շատ գեղեր եւ Սվանսթիայում կամ Իմերսթիայի մի քանի մասերում, որք ի կովկաս, տիրում է strume — շնչափողի խոլի ուռչելը եւ cretinisme — գանգի տձեւութեան հետ խորին բթամտութիւն: Նորերումս, ինչպէս հաղորդում է «The Lanset» բժշկական լրագիրը, Ամերիկայի Տեխաս նահանգում օրէնսդրուել է, որ բանտերի բարակացաւով հիւանդներին միշտ բացօդեայ պահեն եւ պարապեցնել տան պարտիզպանութեանը:

Finsen բժիշկը առաջարկում է բուժել մի շարք հիւանդութիւններ սոսկ թանձրացեալ արեւի լուսով. այդ գաղափարը ընդհանուր գործադրութիւն գտաւ Եւրոպայի բոլոր երկրներում: Sanatorium — առողջարանների գաղտնիքը բացօդեայ ապրելն է:

Վերոյիշեալ փաստերը եւ տեղեկութիւնները աւելի քան բաւարար են ցոյց տալու համար՝ Ա. թէ մաքուր օդը անազին ազդեցութիւն ունի մարդու առողջութեան վերայ, Բ. օդի ջերմութեան աստիճանը, տարուայ եղանակներն

սերտ կապերով կապուած են մարդու հոգեկան անգամ տրամադրութեան հետ :

Միւս կողմից պատմական փորձով յայտնի է, որ երկրագործ ժողովուրդը օժտուած է առաքինութեամբ եւ չէ պարունակում իւր մէջ այն տարրերը, որոնք մղում են վաճառական ժողովրդին դէպի բարոյական անկումը :

Հողն է որ սիրել է տալիս իւր տիրոջը այն երկիրը ուր նա բնակուած է եւ տալիս է նրան ազատ դիրք, ազատ որ եւ է կողմնակի հաշիւներէից, — լինի այդ բարոյական սեղանական կամ միջազգային : Տարուայ նշանաւոր մասը երկրագործը, գտնուելով բաց օդի մէջ, կազուերում է իր կազմուածքը, սովրեցնում է նորան եղանակի բնութիւններին եւ մայր բնութեան ծոցիցը ծծում է անզոր տրամադրութիւն եւ, ենթարկուելով արեւի լուսոյն եւ ճառագայթներին, ապահովում է իւր անձը բազմատեսակ միկրոբներէից, որոնք աճում են եւ զարգանում խաւարի մէջ, խեղդուած օդի մէջ : Մի բան միայն սեւացնել կարող է հողագործին հորիզոնը զափիջական յոգնածութիւնն է որը միշտ եւ յարատեւ կրկնուելով, կարող է ջլատել հողագործի ուժերը :

Ահա՛ այդ կետումն է որ «Գութան»ը գալիս է օճանդակ լինել հողագործին, թեւ տալ նորան, սովրեցնել նորան տնտեսել իւր ոյժը եւ իւր ժամանակը, ծանօթացրնելով հողագործին գիտութեան բարեաց հետ . այսպիսով միայն հայ մարդը կարող է մրցել անաջողութիւնների դէմ եւ հաստատ ոտքով տեղ ունենալ երկրագնդի երեսին :

Ես ցանկանում եմ, որ Հայ ժողովուրդը գլխաւորապէս երկրագործ մնայ, որպէս եւ իւր պապերը եղել են, որպէս եւ հազարաւոր տարիներով ինքը հաւատարիմ է մընացել իւր կոչմանը : Երկրագործի մի կտոր քրտինքով աշխատած հացը չեմ փոխել հարուստների փարթամագոյն սեղանների խորտիկների հետ :

Առողջ է հողագործի մարմինը եւ նորա հոգին : Կեցցէ հողագործութիւն եւ կեցցէ «Գութան» անկեղծ բարեկամ հողագործ ժողովրդի :

Բժշկապէս Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ՇԱՏ ՈՒ ԼԱԻ ԿԱՐԱԳ ՊԱՏՐԱՍՏԵԼ

Կարագ պատրաստելու համար երկու գլխաւոր գործողութիւններ կը կատարուին, սերառումը՝ այսինքն սերը զատելը եւ հարելը: Երբեմն կթուած կաթը ամաններու մէջ եւ զով տեղ մը կը թողուին մինչեւ որ սերը ինքնիրեն բարձրանար հեղուկին երեսը. այդ սերէն կը պատրաստէին կարագը հարելով խնուցի՝ հարոց ըսուած գործիքներով (մեր կողմերը հողէ խնուցներով կամ տիկերով կը հարեն): Այս դրութիւնը ունի իր թերութիւնները, որովհետեւ սերի կարեւոր մէկ մասը կը մնայ կաթին մէջ:


Շատ երկիրներու մէջ, ինչպէս Ֆրանսայի հողագործները կաթէն սերը կը զատեն մասնաւոր գործիքներով որոնք եփռեմեզ (22, 23) կը կոչուին որով կ'ստացուի կարագի ամենամեծ քանակութիւնը եւ ամենէն ընտիրը, քան հին դրութիւններով: Այս մեքենաները պարզ եւ աժան են ու դրեթէ այսօր Ֆրանսայի բոլոր ագարակներու մէջ կը գործածուին: Քիչ մը կարագ պատրաստելու համար այս գործիքով պէտք է 23 լիդր կաթ, մինչդեռ հին դրութեամբ պատրաստելու համար 28-30 լիտր, հինին եւ նորին մէջ 5-7 լիտրի կորուստ մը կը նշմարուի, որ ըսել է թէ՛ էքոնէմէօզ մեքենայով հինգ կովու կաթով այնքան կարագ կ'ստացուի, որքան պիտի ստացուէր հին դրութեամբ վեց կովով. ուրկէց կը հետեւի՝ որ էքոնէմէօզ գնող հողագործը վեցերորդ կով մ'ալ գնած կըլլայ, որ ոչ կուտէ, ոչ կը հիւանդանայ, ոչ կը մեռնի, ոչ կերեւայ եւ կաթ կուտայ:

Միւս կողմէ, մեքենան աժան է. 200 ֆրանքով կարելի է լաւ մը գնել, որ կարող ըլլայ ագարակի մը գործը տեսնել. կին մը, նոյն իսկ տղայ մը կրնայ դարձնել:


Այս մեքենան կրնայ դիւրութեամբ գործածուիլ եւ մաքրուիլ: Որպէսզի գործողութիւնը լաւ կատարուի՝ պէտք է կաթը 30-34 աստիճանի բարեխառնութիւն ունենայ. կաթը կթուած ատեն արդէն այդ բարեխառնութիւնը (տաքութիւնը) ունի, հետեւաբար լաւ է իսկոյն մեքենայէն անցնել եւ սերը առնել: Եթէ կարելի չըլլայ իսկոյն մե-

քենային տալ կաթը եւ պաղի՝ կրկին պէտք է տաքցնել մինչեւ որ վերը յիշուած աստիճանը ունենայ :

Այս մեքենայները այնպէս շինուած են, որ կաթը մեքենային մէջ կը վազէ ծորակէ մը (պուրմա), կեդրոնախոյս



պատ. 22



պատ. 23


ոյժի ազդեցութեամբ կաթէն բաժնուած սերը կը վազէ մէկ խողովակէն սերագուրկ կամ ջրալի կաթն ալ (petit-lait) միւսէն :

Ջրալի կաթը կը պահէ իր բնական համը, որով կարելի է սնուցանել հորթեր եւ կամ շինել պասուական, բայց անիւղ (եաւան) պանիրներ :


Ջարգացած երկիրներու կենդանաբուծները անսեր կաթին կը խառնեն եգիպտացորենի, բրնձի ալիւր կամ գետնախնձորի բուսալիւր եւ ատով կը սնուցանեն պարարտցուելիք հորթերը, որովհետեւ բնական կաթի սննդական արժէքը կը ստանայ այդ խառնուրդներով :

Սերը մեքենայէն ելլելուն պէս կարելի է հարել հարուցով (պատ. 24, 25), թէեւ ստացուած կարագի համը բոլորովին ընտիր չըլլար, բայց կրնայ աւելի երկար ատեն պահուիլ :

Բոլորովին ընտիր եւ համեղ կարագ ստանալու համար,



պրս. 24



պրս. 25


սերը պէտք է լեցնել ամանի մը մէջ ու զնել մաքուր, ոչ գարշահոտ եւ զով տեղ մը եւ քսան եւ չորս ժամ վերջը հարել, եթէ այս որոշուած ժամանակէն աւելի վար դրուի՝ սերը կը թթուի եւ անով պատրաստուած կարագն ալ զգուելի եւ անախորժ համ մը կունենայ:

Որպէսզի կարագը կանոնաւոր կերպով կազմուի, պէտք է որ սերն ալ որոշ բարեխառնութիւն մը ունենայ նայելով եղանակին՝ ամառը պէտք է ունենայ 13-14 աստիճան մինչդեռ ձմեռը 15-17 աստիճան. ասկէց աղէկ կը տեսնուի՝ որ պէտք է ամառը պաղեցնել եւ ձմեռը տաքցնել սերը այդ աստիճանները գտնելու համար: Հարողներ կան, որոնք մասնաւոր գործիք մը ունին իրենց վրայ, եւ ըստ կամս պաղ կամ տաք ջուր լեցնելով կը տաքցընեն կամ կը պաղեցնեն կարագը, անոնք որ գուրկ են այդ գործիքէն գործողութեան սկսելէ առաջ պէտք է սերին պէտք եղած աստիճանը տալ:


Այսպէս գործելով շուտով կը կազմուի կարագը եւ միշտ համեղ ճաշակով:

Կարագը ըլլալէն ետ-

քը, հարողէն կը հանուի ուրիշ աշխատութիւններ կատարելու համար. այսինքն մէջը գտնուած ջուրը հանելու, որ կը կատարուի մաքուր եւ խնայողական կերպով քրոյ (malaxeur) (26, 27) ըսուած գործիքներով, որուն վրայ կա ըազը կը ճնշուի, կը թրուի եւ լուացուելով կը մաքրուի միանգամայն:



պատ. 26



պատ. 27

Այս գործողութիւնէն վերջը, այսպէս պատրաստուած կարգը հրապարակ կելլէ վաճառուելու:

Եւրոպական երկիրներու մէջ կարագը կաղապարներու մէջ գնելով, աչքի հաճելի զանազան ձևեր կուտան եւ վերջը կը փաթտեն որթատունկի, կաղամբի տերեւներու կամ մասնաւոր մագաղաթանման թղթերու մէջ:

Վերջացնելէ առաջ, քանի մը խօսք ալ պիտի ըսենք, ցոյց տալու համար, մեր ֆրանսացի հողագործներու մեքենական սերառու գործիքներու շնորհիւ ըրած շահի մասին:

Կով մը՝ տարին կուտայ 2500 լիտր կաթ՝ ուրկէ հին գրութեամբ կը ստանային 80 քիլօ կարագ, քիլօն 2 ֆր. 50ի հաշուով կը ստանային 200 ֆրանք: Հիմա սերառու մեքենաներու գործածութեամբ նոյնքան կաթէն կը ստանան 100 քիլօ կարագ, որ աւելի ընտիր ըլլալով, կը վաճառուի 3 ֆր. 80ի եւ յաճախ 3 ֆրանքի, ըսել է 280-300 ֆրանք. ասկէց կը հետեւի՝ որ մեքենական սերառումը, ամեն տարի եւ կով գլուխ հողագործին 80-100 ֆրանքի աւելի շահ մը կուտայ, այնպէս որ՝ նոյն իսկ մէկ երկու կովեր ունեցողներ իրենց մէկ տարուան ըրած շահէն կըրնան վճարել մեքենայի գինը:

Կուտանք փոքրիկ կաթնատան մը համար պէտք եղած գործիքներու անունները իրենց գներով.

Սերառու մեքենայ մը	200 ֆրանք
Հարոց մը	45 »
Թրոզ մը	75 »
Ամաններ սերի եւ կաթի	15 »

Գումար 360

Այս ձևի վրայ շատ մը կաթնատուններ հաստատուած են Ֆրանսայի մէջ. կը մաղթենք որ մեր արեւելքի եղբայրներն ալ հետեւին իրենց ֆրանսացի հողագործ բարեկամներուն եւ օգտուին:

ԲՕԼ ԺԷՐԷ

Դեր-սևօրէն «Ակոփիլոյրիւռ Մօսկուն» քերթի

ԳԻՒՂԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

2. Քաղաքներու եւ գիւղերու բաղդասակահ մահաքիւր. — Անուրանալի է թէ գիւղերու մէջ մեռնողներուն թիւը քաղաքի մէջ մեռնողներուն թիւէն շատ քիչ է:

Յրանսա՛ քաղաքներուն մէջ մեռնողներուն տարեկան ընդհանուր թիւը 1000՝ բնակչի վրայ 26, 1 է, մինչդեռ գիւղերու մէջ մահաթիւր 1000ին 21, 5 է:

Անգլիա՛ մահաթիւր 1000ին 25 է քաղաքներու եւ 18 գիւղերու համար:

Պելճիգա՛ գիւղերու մահաթիւր 1000 բնակչի վրայ 21, 1 եւ քաղաքներու համար 25, 1 է:

Բրուսիա՛ քաղաքներու համար 30, 45 եւ գիւղերու համար 28, 2:

Իտալիա՛ քաղաքացիներուն մահաթիւր 1000 բնակչի վրայ 31, 60 է, իսկ գիւղացիներունը 27, 60:

Տանիմարքա՛ քաղաքացիներունը 23, 38 եւ գիւղացիներունը 19, 68:

Սաքսոնիա՛ քաղաքացիներունը 32, 15 եւ գիւղացիներունը 27, 5:

Շուէտ՛ տարբերութիւնը աւելի մեծ է, գիւղերու մէջ մահաթիւր 1000 բնակչի վրայ 19, 65 է, մինչդեռ քաղաքներու մէջ 26, 5:

Սկոտլանդիա՛ տարբերութիւնը աւելի զգալի է. մահաթիւր քաղաքներու համար 27, 1 եւ գիւղերու համար 16, 9 է:

Անշուշտ մեր գիւղացիներուն եւ քաղաքացիներուն բաղդատական մահաթիւր յիշուած երկիրներուն միջին համեմատութիւնը ունենալու է, հակառակը ենթադրելու պատճառ մը չ'ունինք: Ինչպէս կը տեսնուի, քաղաքներու մէջ մեռնողներուն թիւը գիւղերու մէջ մեռնողներէն միշտ բարձր է: Մէնք այս կարգի բաղդատական վիճակագրութիւն մը չունինք, որպէսզի կարողանանք ճշգրիտ եւ օգտակար հետեւութիւններ քաղել. մեր նպատակին հասնելու համար ստիպուած ենք միշտ եւրոպականին դիմել:

Քաղաքացիներուն եւ գիւղացիներուն մահաթիւրին մէջ

տեսնուած այս տարբերութիւնը՝ համեմատութեան այս արդիւնքը ի՞նչ բանի վերագրելու է: Չենք վարանիր ըսելու թէ՛ մասնաւորապէս քաղաքային բազմահոծութիւնն է, որ համաճարակի մը միջոցին քաղաքներու մէջ մեծ թուով զոհեր կը պատճառէ, մինչդեռ գիւղերու մէջ մահացուցիչ համաճարակ մը ճարակած գիւղին կամ շէնին (hameau) բնակիչներուն քիչութեամբը կարելի եղածին չափ անվերէպ կը սահմանափակի: այնպէս որ՝ պատճառած մահերու գումարը գիւղական բազմամարդութեան ընդհանուր մահաթիւին վրայ առաւելութիւն մը ցուցնելէ հետի կը մնայ, բան մը որ քաղաքային բազմամարդութեան համար յաճախ կը պատահի:

Էօսթէրլէնի կողմէ ճշդուած հետեւեալ թուանշանները համաճարակ ախտերով քաղաքներու մէջ մեռնողներու թիւին՝ գիւղերու բազմատամբ կրկնապատիկ ըլլալը ստուգապէս կը ցուցնեն:

Անգլիա՝ 3, 553, 161 բնակչով քաղաքային բազմամարդութեան մը թուանշաններուն վրայ, Էօսթէրլէն համաճարակ կամ փոխանցիկ հիւանդութիւններով մեռնողներու թիւը 12, 766 նշանակուած է, այսինքն քաղաքներու բնակիչներուն 10, 000էն 35, 19 մահ, մինչդեռ գրեթէ համահաւասար գիւղական բազմամարդութեան մը թիւին վրայ, այսինքն, 3, 500, 750 բնակիչներէն համաճարակ հիւանդութիւններով մեռնողներուն թիւը 6, 045 եղած է. ասիկա գիւղերու բնակիչներուն 10, 000ին վրայ 17, 2 մահէն աւելի չընէր:

Շուէտի 14 տարուան (1861—1875) շրջանի մը միջոցին գիւղերու եւ քաղաքներու մէջ եռացական տենդերով (fièvres éruptives), կեղծմաշկով եւ ժանտատենդով մեռնողներուն համագումարը հրատարակուած է: Այս համաճարակ եւ փոխանցիկ հիւանդութիւններով մեռնողներուն տարեկան թիւը քաղաքներու համար 10, 000 բնակչի վրայ 34, 5 եւ գիւղերու համար 23, 7 եղած է:

Պ. տը Բարվիլի *Revue des Sciences* ի մէջ հրատարակած հետեւալ ցուցակը որոշ կերպով ցոյց կուտայ եւրոպական զանազան մեծ քաղաքներու բազմամարդութեան եւ մահաթիւին միջեւ եղած մատչեմատիքական համեմատութիւնը:

	սնն զյուխ բնա- կիչներու թիւը	1000 բնակչի վրայ մահաթիւր
Հօնտօն	8 բնակիչ	23
Պերլին	32 »	25
Բարիզ	35 »	28
Բեթերսպուրկ	52 »	41
Վիէննա	55 »	47

Գիւղացիներուն մահաթիւրը տարիքի յառաջացման հետ զուգընթացաբար կ'աճի, ծերերը մահուկներու եւ չափահասներու բաղադրամասը աւելի շատ կը մեռնին, մինչդեռ քաղաքացիները չափահասութեան մէջ աւելի շատ զոհ կուտան, ինչպէս որ հետեւեալ բաղադրատական ցուցակը մեր այս ըսածը կը հաստատէ :

մեռնողներ	գիւղացիներ	քաղաքացիներ
0էն 10 տարեկան	1000ին 282 մահ	1000ին 305 մահ
10էն 60 »	» 296 »	» 357 »
60էն վեր	» 422 »	» 338 »

Ուրեմն բազմահոծութիւնը քաղաքներու համար արտաքուստ այնչափ աննպաստ եղող այս մահաթիւրին ազդեցիկ պատճառն է : Ուրիշ կերպ խօսելով, թիւը (այսինքն բազմահոծութիւնը) միշտ պիտի սնուցանէ մահաթիւրը :

Sof. 4. 3. ՓԱՇԱՅԵԱՆ

Ա Յ Ծ Ի Կ Ա Թ Ը

Այծերը՝ իրենց ցեղին եւ տեսակին նայելով կրնան տալ 1էն 5 մինչեւ անգամ 6 լիգր կաթ. ցեղէն զատ՝ անհատի մասնաւոր կարողութիւններէն ալ կախում ունի կաթի քանակը :

Ինչպէս կովերու՝ նոյնպէս այծերու միեւնոյն ցեղին եւ տեսակին մէջ կը գտնուին լաւ կամ վատ կաթնտուներ, ինչպէս աղէկ կամ գէշ կարագատուներ եւ պանրատուներ :

Շատ անգամ առիթ ունեցած եմ հաստատել որ ազարակի մը երեք չորս այծերէն մէկ քանին աչքի կ'իյնային իրենց կաթի քանակին առատութեանը պատճառով՝ մէկ քանին ալ իրենց կաթի իւղով եւ պանրով հարուստ ըլ-

լաշնուն համար. առաջիններու կաթը կը ծախուի՝ եւ անով կը սնուցուին ընդհանրապէս ուլերը, երկրորդիններով կը պատրաստուին պանիր ու կարագ:

Երեք տարբեր տեսակներու կաթի քիմիական քննութիւնը կուտայ հետեւեալ արդիւնքը:

Հարիւր մաս կարի մեջ	Զուիցերական	Փիրենեան	Նիւպիի
Կարագ	2.40	6.11	8.49
Պանրային	2.57	4.67	3.55
Շաքար	4.67	5.28	5.40
Աղեր	0.60	1.10	4.22
Զուր	92.60	79.00	80.10

Այս տարրալուծական քննութենէն կը հետեւի, որ կարագի համեմատութիւնը կը փոխուի մէկէն երեքի եւ պանրայինը մէկէն երկուքի՝ եւ այս տարբերութիւնը կը տեսնուի նոյն իսկ միեւնոյն ցեղի եւ միեւնոյն ազարակի կենդանիներու միջեւ:

Վերջերս երկար ուսումնասիրութիւններ կատարուցան այծի կաթին վրայ՝ իբրեւ մանուկներու սնունդ. արդարեւ մեծ շահեկանութիւն կը ներկայացնէ խնդիրը, որովհետեւ այծերը ենթակայ չեն փուկութեան (tuberculos) եւ բերնակեղիկի ջերմին (fièvre aphteuse), մինչդեռ այս հիւանդութեանց պատճառով կուլերու կաթը վտանգաւոր կը լլայ: Թէեւ գիտենք հիմա, որ այս հիւանդութեանց վարակիչ սերմերը կրնանք սպաննել եռացումով, բայց եռացած կովու կաթը դժուարամարսութիւն կը ստանայ եւ երեւի թէ՛ տղայոց փորճարութիւն ալ կուտայ, այս հիւանդութիւնն ալ ամեն տարի մանաւանդ պմառը՝ շատ թուով նորածին տղաք կը կոտորէ:

Կովու կաթի դժուարամարսութիւնը կը վերագրուի մասամբ իր թանձրութեանը, մասամբ ալ կնոջ կաթէն աւելի շատ պնդաւոր (solide) նիւթեր պարունակելուն, դարձեալ՝ այս կաթի պանրայինը ստամոքսին մէջ կը կազմէ դժուարամարս փտորներ եւ գնդակներ:

Ալդասի եւ Զուիցերիոյ մէջ՝ այծի կաթով կը սնուցուին մանուկները, բժիշկներ ալ փորձերով՝ քաջալերող արդիւնքներ ստացած են մանաւանդ վեցամսեայ տղոց վրայ, որոնց ստամոքսը արդէն բաւական զօրաւոր է:

Կնոջ կաթը թեթեւ է. կը պարունակէ հարիւրին միայն 2.50 պանրային եւ 4էն նուազ կարագ. բայց կովի եւ այծի կաթէն աւելի շաքարոտ է՝ այսինքն հարիւրին 6 մաս կը պարունակէ. աւելի դիւրին է գտնել կնոջ կաթի բազարութեան մօտեցող կաթնառու այծեր՝ քան կովեր:

Ուրիշ պատճառով մ'ալ այծը նախամեծարութիւն կը ստանայ. իրեն կաթին մէջ գտնուած պարարտ գնդակները աւելի փոքր են եւ աւելի նուրբ՝ հետեւաբար դիւրաւ կը

իւրացուին. ինչպէս ասոր պանրայինը կովինէն աւելի թեթեւ եւ աւելի փոքր փսորներ կը կազմէ, որ աւելի կը մօտենայ իր յատկութիւններով մարդկային կաթին :

Այսպէս, այծի կաթը երկու տեսակէտով նախապատօսուելիքն է կը ստանայ, որովհետեւ չի փոխանցեր վտանգաւոր հիւլանդութիւններ մարդուն, երկրորդ դիւրամարսելիութեան՝ որով կոչուած է մեծ ծառայութիւն մատուցանել մատղաջ տղոց սննդեան : Թողունք որ, արդէն բժիշկները թոյլակազմ մարդոց կը պատուիրեն այծի կաթ խմել :

Պակասութիւնը որ ունի այս կաթը՝ իր հոտը եւ մասնաւոր համն է. սակայն կարելի է ասոր ալ առաջքը առնել կենդանիներու ընտրութիւնովը եւ անոնց տալով մեծաւ մասամբ չոր սնունդ :

Այծի կարագն ալ թշնամի միքրօպներ չի պարունակեր. այս կարագը կովինէն աւելի ճերմակ եւ աւելի կակուղ է եւ այծ կը հոտի՝ մանաւանդ քիչ մը հինցած կաթէն հանուած իւղը. այս մասնաւոր եւ անախորժ հոտը կ'անհետանայ, եթէ փոխանակ հին դրութեան, կեդրոնախոյս մեքենայով պատրաստուի կարագը :

Պ. Քոէբէն երկու երեք տարիներէ ի վեր ուսումնասիրելով խնդիրը՝ կը կարծէ, որ ալբան այծերը մանկանց սնունդին համար կուտան լաւագոյն կաթը, որ շատ կը մօտենայ կնոջ կաթի բաղադրութեան եւ յատկութեանց : Կարագի եւ պանրի համար կը նախընտրէ սպանիական կամ Մալթաի տեսակները :

Կովէն սա առաւելութիւնն ալ ունի այծը, որ կրնայ դիւրութեամբ պահուիլ նոյն իսկ քաղաքներու եւ մասնաւոր տուններու մէջ, եւ ամեն վայրկեան տղու տէրը իր տրամադրութեան տակ կրնայ ունենալ թարմ ու տաք կաթ, որ կրնայ կթուել վերջը տրուիլ իսկոյն մանկան, փոխանակ փոխադրուած, պաղած եւ կրկին տաքցուած կաթի : Բնութեան մէջ, նորածինները ծծէն կը ծծեն կաթը, ուրեմն պէտք է աշխատել մօտենալ այդ պայմանին, այդ վայրկեանին կաթը կենդանի է, ունի բարեբար յատկութիւններ, որոնք պաղելով, փոխադրուելով եւ օդի ազդեցութեան տակ մնալով կը կորսուին :

SOPՆԻԿ

Քենիջ կաթնագործութեան

Le Gérant : PAUL GÉRÉE

Imprimerie B. Missac, 4, rue Ortolan, Paris.

ՆՈՐ ԼՈՒՐԵՐ

Մենք կը կարծէինք թէ՛ հողագործական շարժումը շատ ուշ պիտի սկսէր մեր մէջ, ուրախութեամբ կ'ըսենք, որ արդէն այդ վերածնութիւնը սկսած է:

Ահաւասիկ.

— Մեզ կը դրեն, որ վանայ մէջ պիտի բացուի ազգային հողագործական զարոյց մը, որուն վրայ մասնաւոր տեղեկութիւններ չունենալով չենք կրնար բսել աւելին:

— Խարբերդէն կը դրեն մեզ. «Գութան»ի ընթերցող եւ հողագործական գիտութեամբ զարգացած պարոն մը, մտադիր է բանալ հողագործական վարժարան մը (համետ ծրագրով). կը շնորհաւորենք զինքը իր օգտակար գաղափարին համար: «Գութան»ը իր բոլոր ճիգը ի գործ պիտի դնէ իրականացնել տալու համար այդպիսի օգտակար գաղափարներն:

— Մարզուանի մէջ ալ «Գութան»ի ընթերցող երիտասարդութիւնը, հաւաքում մը կ'ունենայ, ուր կը վիճեն 8 ժամ եւ հետեւեալ եզրակացութեան կը հանգին.

Թէ՛ այսուհետեւ պէտք է մղեն պատանեկութիւնը հողագործական եւ արուեստական ասպարէզներու:

Մենք ուրիշ բան չենք կրնար ըսել՝ եթէ՛ ոչ քաջալիրել զիրենք եւ խոստանալ իրենց մեր բոլոր աջակցութիւնը եւ բարեկամութիւնը:

«Գութան»ի Խմբագրութիւնը ամէն զոհողութեամբ պիտի պաշտպանէ իր ոյժերուն ներած չափով, բոլոր անոնք, որ կ'աչխասին երկրի հողագործութեան զարգացմանը:

Ուրախ պիտի ըլլայ Խմբագրութիւնը, որ առիթը ներկայանայ իր բարեկամութիւնը ցոյց տալու:

Մեր Թուրքիոյ բաժանորդները կրնան իրենց բաժնեգիրը զրկել Կ. Պոլիս հետեւեալ հասցէին.

Ղազար էֆէնտի Մեծատուրեան
Կալաթա, Տէյիրմէն խան
Կ. Պոլիս

«ՀԱՄԱԼՍԱՐԱՆ», Ի ՏՊԱՐԱՆ

(ՄԻՍՍԻՔ ՊԱՂՏԱՍՍՐԵԱՆ)

Կը սպազբուին հայերէն, ֆրանսերէն եւ օտար լեզուներով առեւ տեսակ աչխատութիւններ.

Գրքեր, Հանդեսներ. — Առեւտրական եւ առօրեայ գործերու հարկաւոր քուղքեր, Շրջաբերական, Այցաբարս, Նառնայներ (ամէն տեսակ), Հրաւիրագիր, եւ այլն:

ԶԱՓԱԻՈՒ ԳԻՆ — ՄԱՌՈՒՐ ԱՇԵԱՏՈՒԹԻՒՆ

Օտար երկիրներու յանձնարարութիւնները կանխիկ են Դիմել՝

B. MISSAC

4, Rue Ortolan — PARIS (V^e)

CHARRUES A VAPEUR
 LOCOMOTIVES A VAPEUR
 COMIONS A VAPEUR
 TOMBERAUX ROUTIERES
 ROULEAUX DES RAUTE A VAPEUR

De construction parfaite et d'une solidité à toute épreuve,
 sont livrés à des prix excessivement réduits par

John Fowler et Cie.

Magdebourg
 Allemagne

ՇՈԳԵՇԱՐԺ ԱՐՕՐՆԵՐ
 ՊՈՂՈՏԱՆԵՐՈՒ ՇՈԳԵՇԱՐԺՆԵՐ
 ՇՈԳԵՇԱՐԺ ՀՈՂԱՍՍԹԼԱԿՆԵՐ
 ՇՈԳԵՇԱՐԺ ՑԱԾ ՍԱՅԼԱԿՆԵՐ
 ՊՈՂՈՏԱՆԵՐՈՒ ՇՈԳԵՇԱՐԺ ԼՈՂԵՐ

Փորձուած տոկունութեամբ եւ ընտիր շէնքով, կը շրկուին ամենաաժան գներով Գերմանիոյ Մակաէպուրկի ԺՕՆ ՅՕՎԼԷՐ Բնկերութեան կողմէն:

«ԳՈՒԹԱՆ»ը կը հրատարակուի առայժմ ամիսը անգամ մը: Բաժանորդագրութիւնն է՝ արտասահմանի համար՝ 12 ֆր. Տաճկաստանի՝ 10 ֆր. Ռուսիոյ 6 րուպլի, Ամերիկայի՝ 3 առլար, Տաճկաստանի ուսուցիչներու եւ ուսանողներու (հաստատական վկայագրերով)՝ 6 ֆրանք:

Մուտք ունի ամէն երկիր: Դիմել խմբագրութեան

K. MEDZADOURIAN

23, Rue de la Collégiale
 PARIS

ԱԶԳ

Պատճառով մը՝ ԳՈՒԹԱՆԻ 4րդ թիւը 15—20 օրէն պիտի շրկուինք ճիշտ թուին հետ. մնացած 6 թիւերն ալ յաջորդաբար, որով մեր բաժանորդները ստացած պիտի ըլլան մինչեւ տարւոյս վերջը խոստացուած ԳՈՒԹԱՆԻ 12 թիւերը:

Կը յուսանք, որ ԳՈՒԹԱՆԻ համակրողներն ալ ի նըկատի կ'առնեն, որ մէկ հոգիի մը ոյժերէն վեր է հազարաւորներու պահանջներուն գոհացում տալ, առանց հաւաքական աջակցութեան, կը փութան գոնէ իրենց բաժնեգները շրկել, որպէս զի մինք ուրիշ մտածում չունենանք. եթէ ոչ զարգացնել ԳՈՒԹԱՆԸ: